

ձը, շխտակը, իր բառերով «աշխարհաբարը» կը փնտռէր ու կը նախասիրէր. բաւ կը կազմակերպէր դպրոցական կարգ-կանոնը. իսկ ելեւմուտքի հաշիւներուն մէջ իր գլխաւոր ու օրինակելի յատկութիւնն էր բծախնդիր յատկութիւնը:

Հ. Խաչատուր Վրդ. ի շինարար բազմաթիւ արժանիքներէն մասունք կը մնայ հիմա, Ս. Ղազարի վանքին մէջ, նորընծայարանի փոքրիկ մատուռը, իր հայաձեւ խորանով ու տապանակով, պատրաստուած՝ Զուարթնոցի եւ այլ հայկական եկեղեցիներու խորաքանդակներուն նմանողութեամբ, որոնց գծադրութիւնները վեհանձնօրէն կատարած է Ճրտ. Յարութիւն Գաղանճեան: Վանքին վերջին աղէտալի հրդեհէն ետք, երբ երկար ժամանակ զրկուած մնացինք մեր եկեղեցիէն, հոն՝ այդ փոքրիկ ու հոգեւին տաքուկ մատրան մէջ կատարեցինք մեր ամէնօրեայ ժամերգութիւնները, միշտ օրհնելով յիշատակը մեր շատ սիրելի, ժիր ու դործունեայ Վարդապետին, որ յաջողած էր հնամենի եւ աղօթքով ու խունկով մաշած մրոտած մատուռը վերածել դեղեցիկ ու սրտադրաւ աղօթատեղիի մը\*\*:

Հողը կակուղ ըլլայ վրադ, սիրելի՛ Հ. Խաչատուր, հեռաւոր Պուէնոս Այրէսի քու պանդուխտ գերեզմանիդ վրայ: Ո՛րքան պիտի ուզէիր դուն ալ հանգչիլ խաղաղիկ Սուրբ Ղազարի գերեզմանատունը, քու դաստիարակ ու սրտակից Հայրերուդ կողքին, մեծ Ալիշանի շունչին տակ, մեր Երանաշնորհ Մխիթար Աբբա՛հօր մօտիկ: Բայց քու շիրիմդ թող ըլլայ ալի մը լոյս, հայրենիքէն ու Ս. Ղազարէն ծաթող՝ հեռաւոր Պուէնոս Այրէսի գաղութին վրայ, որպէս արշալոյս հրավառ, յաւէտ կրօնքի ու ազգի սիրով արծարծելու բոլոր Հայերու սրտերը:

Հ. ՆԵՐՍԷՍ ՏԵՐ-ՆԵՐՍԷՍԵԱՆ

## Հ. ԱՆԴՐԷԱՍ ՎՐԴ. ՖՈԿՈԼԵԱՆ

(1915 – 1976)

Մխիթարեան Միաբանութիւնը մեծ կորուստ մը եւս արձանագրեց 1976 տարուան ընթացքին, վաղաժամ մեկնումով իր սիրելի ու վաստակաւոր անդամներէն մէկուն՝ Հ. Անդրէաս Վրդ. Ֆոկոլեանի, իր կեանքի վաթսուներորդ գարունը հազիւ թեւակոխած:

Զուարթ նուիրումի ու անխոնջ աշխատանքի տիպարն էր մեր ախրելի ու պարթեւահասակ Հ. Անդրէասը, որ Մայիսեան պայծառ օր մը, դեղեցիկ վարդերու եւ բուրումնաւէտ հիւրկներու թափօրով կ'երթար հանգչիլ Մխիթարեան Հայրերու գերեզմաննոցը, հոգինբնութեամբ հանդրուանին մէջ դառնալու համար ճրագ մը լուսաշող, նոճի մը շնորհազարդ ու աղօթիկեր:

Ո՛րքան կը սիրէր Հ. Անդրէաս ծաղիկներն ու բոյսերը, որոնք այդ օրը դոյնդոյն բացուեր էին իր ճամբուն վրայ, կարծէք վերջին համբոյրով ողջունելու իրենց սիրահար Վարդապետը. քայց ինք անտարբեր կը մնար այլեւս անոնց առթած գեղին ու հրապոյրին. իր իսկ գուրդուրոտ ձեռքերով հաւաքած ու ճարտարօրէն դասաւորած անհամար թիթեռնիկներու եւ միջատները ճոխ հաւաքածոները որբ պիտի մնային այլեւս:

Իր սիրասուն աշակերտները թողած, ո՞ւր կ'երթար Հ. Անդրէաս. չէ՞ որ ամէն Մայիսի՝ երբ դասարան մտնէր, անպայման ձեռքին մէջ կ'ունենար սիրուն փունջ մը վանքի ծաղիկներէն, ամէն տեսակէ ու սեռէ, եւ ծայր կու տար իր հետաքրքրական դասախօսութիւններուն, դործնական քացատրութիւններով գրաւիչ, հայադրոյժ անծանօթ բառերու տոպրակ մըն ալ պարպելով գրասեղանին վրայ, ծաղիկներուն առնթեր:

Անողորմ հիւանդութիւն մը տապալած էր առողջ կաղնին, մեր կենսուրախ ու կորովի Հ. Անդրէասը, որ կեանքին մէջ հիւանդ իսկ չէր եղած. ու մենք չէինք անգամ հաւատար անոր վաղահաս մահուն:

3 Մայիս 1976. կէսօրէ ետք՝ ժամը 1,50. հեռաձայնը կը դուժէ. դադրած է բաբախել Հ. Անդրէասի սիրտը: Նախորդ օրն այդ ժա-

\*\*\*) Վանքին նորընծայարանի մատրան վերաշինութեան եւ նաւակատիքի հանդէսին մասին տե՛ս «Մխիթարեան Ընտանիք» 1954, Թ. 3, էջ 48:



1970ի միաբանական Ընդհ. Ժողովին կ'ընտրուի Վանքի կեդրոնական վարչութեան անդամ, խորհրդականի պաշտօնով, ու կը վերադառնայ Ս. Ղազար:

«Մխիթարեան Ընտանիք» ամսաթերթի «Հիմնարկութեան շրջանին» (1947-48), Հ. Անդրէաս գործած է իբր խմբագրի գլխավոր օգնական, թերթին հիմնադիր՝ Հ. Վահան Յովհաննէսեանի կողքին, ու այնուհետեւ երկար տարիներ աշխատակցած է թերթին՝ գիտական նիւթերով, յաճախ ՖԱ տոտրագրութեամբ:

Վանքի աշակերտներուն սիրելի վարդապետն էր Հ. Անդրէաս, որ ինքզինքն անոնց ընկեր ու աւագ եղբայր կը նկատէր. իր սիրտը բաց էր ամէնուն: Ամառները՝ իբր քաջարի առաջնորդ մարզական խաղերու, գլուխ կ'անցնէր լեռնազնաց պտոյտներ կաղմակերպելու. տղաք պարծանքով կ'ուզէին իր խումբին պատկանիլ, որոնք խիզախ ու չարքա՜՜ ամէնէն առաջ պէտք է մագլցէին լեռներու կատարներուն եւ իրիկունը յաղթական երգերով վերադառնային տուն: «Անդրէի դօրապարին եւ բանակի նորին» կոչուած սուրբերու տօնին օրը, անպատճառ ուրախ պտոյտ մը կը սարքուէր՝ իր գլխավորութեամբ: 1950էն առդին, երբ մեր գիւղի ամարանոցը իր սեփական ինքնաշարժն ունեցաւ, Հ. Անդրէաս էր անոր վարտահալի եւ անխոնջ վարորդը:

Միշտ պատրաստ էր ան զոհուելու, յատկապէս աղքատին ու կարօտեալին համար: Մուրացիկ մը չէր կրնար տխուր տուն վերադարձնել. անպայման պիտի գոհացնէր զայն կերակուրով եւ այլ նպաստներով. մինչեւ իսկ անոր համար ձմեռուան փայտ, գդեստ, եւն... հայթայթելով, հարկի պարագային: Իր կառքին դուռը բաց էր ամէն խնդրողի: Զուարթ խօսքի բաժին մը ունէր ամէնուն: Մերժել բառին տեղ՝ իր բառարանին մէջ դրուած էր սէր:

«Նարեկ» աղօթագրքին յարատեւ ընթերցողն էր Հ. Անդրէաս. զայն դարձուցած էր իր բարձի ընկերը, եւ օր չէր անցներ, արեւ չէր մտներ, որ ինք իր պաշտելի «Նարեկ»էն հատուած մը, գլուխ մը, «Բան» մը կարդացած չըլլար. իր հոգեւոր խոկումներու շտեմարանն էր Նարեկը, իր մշտավառ բուրվառը, որուն փառնկով կը մօտենար Ամենակալին, ամէն գիշեր: Իր երիտասարդութեան շրջանին արդէն, համալսարանական օրերուն, յարատեւ ընթերցողներէ ետք, հոգեվերլուծումն ըրած էր այդ ոսկեղէն աղօթամատեանին, գեղեցիկ յօդուածի մը մէջ ամփոփելով իր տեսութիւնները, աշակերտական ձեռագիր թերթի մը մէջ: Բայց մանաւանդ յաջողած էր իրեն համար կեանքի գիրք դարձնել Նարեկը, անով ապրիլ, անով սնանիլ, աստուածարեալ Ս. Գրիգորէն կայծեր առնելով՝ իր հոգիին բուրվառն արծարծելու եւ իր կրօնաւորական կեանքի նուիրագործումը շնորհազարդելու, ապրելով Ս. Ղազարի մէջ՝ Նարեկի մենաստանին աստուածարեալ «Հակող»ին հետքերով:

Մեթոտիկ աէր մը ունէր Հ. Անդրէաս նաեւ դրական աշխատանքի: Հակառակ դործակալական մտահոգութիւններով բազմազաղ ու չարժուէր իր կեանքին, ամէն օր՝ որոշ ժամերու՝ իր սենեակէն կը լսուէր մատնադիր մեքենային տեւական չրխկոցը, նոյնիսկ ամառուան արձակուրդի շրջանին:

Իբր բնական գիտութիւններու մասնագէտ ուսուցիչ, մասնագիտութիւն՝ զոր ստացած էր յարատեւ ընթերցողներով եւ անձնական պրոփոփումներով, պատրաստած է բուսաբանութեան, կենդանաբանութեան, մարդակազմութեան, կենսաբանութեան, երկրաբանութեան եւ աշխարհագրութեան դասագիրքեր. յատկապէս զնահատելի է իր Հայաստանի աշխարհագրութիւնը, բազմաթիւ գունազարդ պատկերներով ու քարտէսներով ու պատմական տուեալներով ճշիւ. բոլորն ալ դպրոցական առձեռն գործածութեան համար պատրաստուած: Բուսաբանական ու մարդակազմական կամ երկրաբանական հարցերուն համար, վարպետօրէն բառարաններէն կը հաւաքէր բոլոր հայերէն դիտական բառերը, երբեմն ալ ինք կը յարմարցնէր, եւրոպականներուն դիմաց՝ միշտ համապատասխան հայերէնին նախանձախնդիր, եւ համբերութեամբ մէկիկ մէկիկ կը սորվեցնէր աշակերտներուն. եւ խտապահանջ էր այս կէտին մէջ:

Պատրաստած դասագիրքերը անձամբ ալ կը մատնադրէր, յետոյ որոշ թիւով օրինակներ կը բազմացնէր, կը կազմէր. եւ ահա՜ պատրաստ կերակուր հայ աշակերտին, հոնդարահայ վարդապետէ մը պատրաստուած: Իր սեփական տպարանն ունէր, կ'ըսէինք խնդալով, ՖԱ նշանագիրով (Ֆոկոլեան Անդրէաս), զոր երբեմն կը նախընտրէր երաժշտական Ֆա-ի բանալիով նշել, հնգատողեանի մը վրայ:

Գծագրութեան ճարտար ձիրքը եւ նուրբ ճաշակն ալ ունէր, եւ այդ ալ իր դասաւանդութեան նախասիրած նիւթերէն մէկն էր:

Տարիներու ընթացքին, Հ. Անդրէաս զարգացուցած էր նաեւ իր հունգարերէնը, մանկութեան մայրենի լեզուն, եւ այդ գիծով ալ կ'ուզէր բերել իր նպաստը, յաջող թարգմանութիւններով. հինգ արժէքաւոր մատենաներ հայացուցած է ուղղակի բնագրէն:

Այսպէս, Հ. Անդրէաս Վրդ. յիշատակը զնահատելի վաստակով մը հիւսուած է. միաստակ մը՝ բարութեան, եղբայրութեան, գիտութեան եւ անխոնջ նուիրումի հատիկներով ընդելուարուած. բոլորն ալ հոնտներ նուիրական, որոնք Աւետարանին ցորենին նման՝ պիտի ահին հարկաւ երեսնաւոր եւ հարիւրաւոր, սփռելով ամէն կողմ՝ իր բարի յիշատակին եւ օրինակին հետ՝ աէր ու երջանկութիւն\*:

Հ. ՆԵՐՍԷՍ ՏԵՐ-ՆԵՐՍԷՍԵԱՆ

\*) Հ. Անդրէասի մասին տե՛ս նաեւ «Հայ Ընտանիք» 1976, Թ. 11-12, էջ 38-40:

## Հ. ԱՆԴՐԵԱՍ ՎՐԴ. ՖՈԿՈԼՆԵԱՆԻ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

### ՀՈՒՆԳԱՐԵՐԵՆԷ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

#### 1.- Առաջին հատորներով

ՓԱԼ ՃԱՄԲՈՒ ՏՂԱԲԸ (Հեղինակ՝ Փ. Մուրար)

Պատանիներու վեպներն քաղաքացիական ու շատ հաճելի վէպ մը, պատկերազարդ (տպ. Վենետիկ - Ս. Ղազար, 1946, էջ 232)։

ՆԿԱՐԱԳՐԻ ՏԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԳԸ (Հեղինակ՝ Թոք. Թիեմալեր)

Մտերիմ խոսակցութիւններ՝ երիտասարդներու հետ, նկարագրի կազմութեան մասին (տպ. Վենետիկ - Ս. Ղազար, 1953, էջ 266)։

ԳՐԻՍՏՈՍԻ ԶԱՐԶԱՐԱՆՔԻ ՈՒ ՄԱՀԸ (Հեղինակ՝ Բժ. Ռ. Վ. Հիմեֆ)

Արդի բժշկութեան դիտական լոյսին տակ՝ Գրիստոսի հարազատ դիմանկարին գիւտը, Թորինոյի վարչամակին վերլուծումով, պատկերազարդ (տպ. Վենետիկ - Ս. Ղազար, 1960, էջ 132)։

ԷԿԵՐԻ ԱՍՏՂԵՐԸ (Հեղինակ՝ Կեղա Կարտունի)

Պատմական ընդարձակ վէպ, օսմանեան լուծին տակ ճշուած հունգար ժողովուրդի ազատագրումի արիւնք ու փառապանք դրուողներով, 1500ական թը-  
ւականներու պատմական թատերաբեմէն առնուած (տպ. Վենետիկ - Ս. Ղազար, 1962, էջ 640)։

#### 2.- Յօդուածաշարքի ձեւով

ՄԱՐԴՈՒՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆԸ (Հեղինակ՝ Էմիլիա Մատաջ)

Հանճարեղ եւ գլուխ-դրոց թատերադրութիւն մը՝ մարդկային կեանքի եւ պատմութեան ճակատագրին ու ելեւէջներուն շուրջ, գրական բարձր արժէքով։

«Բազմավէպ» - 1966, էջ 117-127, 246-254.

1967, էջ 28-35, 166-176.

1969, էջ 61-74, 230-243.

1970, էջ 141-152, 276-286.

1971, էջ 126-136 (շարունակելի)։

ԱՊԵՏԻՔ ԿՈՄՍԻ ԶԱՐՄԱՆԱԼԻ ԿԵԱՆՔԸ

(Հեղինակներ՝ Քալլոշ, Քերեֆեշեպ, Պ. Նիարի)

Հայ ազատագրական շարժումի սկզբնաւորութեան հարցեր լուսարանող հետա-  
քերտական ուսումնասիրութիւն մը, Թարգմանուած բանասէր Յ. Քիւրտեանի  
առաջարկով ու քաջալերանքով։

«Բազմավէպ» - 1946, էջ 169-173, 306-309.

1947, էջ 18-24, 63-67, 177-180.

1949, էջ 33-36, 90-92.

1953, էջ 120-124, 225-228.

1954, էջ 58-64.

1955, էջ 52-56, 138-142, 225-228.

1956, էջ 70-73 (վերջ)։

### ԱՌՋԵՌՆ ԴԱՍԱԳԻՐՔԵՐ (Մատնագրուած օրինակներ)

ՍԿԶՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ (1953-1964)

Ընդհանուր աշխարհագրութիւն, էջ 53։

Հայաստանի աշխարհագրութիւն, էջ 44 (մեծադիր), պատկերազարդ, քարտէս-  
[նկար]։

Բուսաբանութիւն, էջ 115, պատկերազարդ։

Կենդանաբանութիւն եւ Մարդակազմութիւն, էջ 74 (մեծադիր), պատկերազարդ։

Երկրաբանութիւն, էջ 71 (մեծադիր), պատկերազարդ։

Աշխարհագրութիւն Ասիոյ եւ Ասիական երկիրներու, էջ 28։

Աշխարհագրութիւն Ասիոյ, Աֆրիկէի եւ Ամերիկաներու, էջ 56։

### ՎԵՐՋԻՆ ՇՐՋԱՆԻ ԳՈՐԾԵՐ

1967 - Մեր Հայրերուն երկիրը (Համառօտ ընթացք Հայաստանի աշխարհագրու-  
թեան (Հին Հայաստան եւ խորհրդային Հայաստան), 79 էջ, պատկե-  
րազարդ։

1970 - Ընդհանուր աշխարհագրութիւն (Միջնակարգ դասարաններու համար), 120  
էջ, պատկերազարդ։

Ընդհանուր աշխարհագրութիւն (Բարձրագոյն դասարաններու համար)։ Կը  
պարունակէ՝ ընթացք աստղաբանական, բնական, վեպնաբանական եւ  
մարդաբանական աշխարհագրութեան եւ երկրաբանութեան 327 էջ,  
պատկերազարդ, ծրար հատորի բաժնուած, Ա. (1-163 էջ), Բ. (164-  
327)։

1973 - Բուսաբանութիւն (Բարձրագոյն դասարաններու համար), 158 էջ, պատկե-  
րազարդ։

1974 - Մարդակազմութիւն (Բարձրագոյն դասարաններու համար), 160 էջ, պատ-  
կերազարդ։

1974 - Եւրոպա եւ Եւրոպական երկիրներ, 115 էջ։